

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ



Մարզկենտրոնը՝

ք. Հրազդան

Տարածաշրջանները՝

Հրազդան,

Կոտայք,

Նաիրի

Քաղաքները՝

Հրազդան,

Արմվյան,

Չարենցավան,

Եղվարդ,

Բյուրեղավան,

Նոր Հաճն,

Ծաղկաձոր

Տարածքը	2 086 քառ.կմ/
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7.0 %
Համայնքներ, 2018թ. տարեկգրի դրությամբ	42
Քաղաքներ	7
Գյուղեր	62
Բնակչության թվաքանակը 2018թ. տարեկգրի դրությամբ	251.6 հազ.մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	137.1 հազ.մարդ
գյուղական	114.5 հազ.մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	8.5 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	54.5 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	154 549.9 հա
այդ թվում՝ վարելահողեր	37 680.0 հա

ՀՀ Կոտայքի մարզը գտնվում է հանրապետության կենտրոնում: Այն հարավ-արևմուտքից սահմանակից է մայրաքաղաքին, արևմուտքից՝ ՀՀ Արագածոտնի, հյուսիսից՝ Լոռու, հյուսիս-արևելքից՝ Տավուշի, արևելքից՝ Գեղարքունիքի և հարավից՝ Արարատի մարզերին:

ՀՀ Կոտայքի մարզի տարածքով են հոսում Հրազդան և Ազատ գետերը: Հրազդան գետը (նախկին անվանումը՝ Զանգու) Արաքս գետի ձախ վտակներից է (երկարությունը՝ 141 կմ): Գետի համակարգում կա 340 վտակ, որոնցից 25-ն ունեն 10 կմ-ից ավելի երկարություն: Գետի խոշոր վտակներից են Մարմարիկը, Ծաղկաձորը, Արայի գետը, Գետառը:

Ազատ գետը նույնպես Արաքսի ձախ վտակներից է (երկարությունը՝ 55 կմ): Սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայից (հիմնականում սնվում է ստորերկրյա ջրերով): Գետի ջրերն օգտագործվում են հիմնականում ոռոգման նպատակով:

Մարզը հարուստ է հանքային ջրերով, դրա վկայությունն են «Բջին» և «Արզնի» հանքային ջրերը:

Մարզի տարածքում են գտնվում Գեղամա լեռների փեշերը, Ծաղկունյաց լեռնաշղթան, Հատիս և Արայի լեռները: Հատիս լեռը (նախկին անվանումը՝ Շամիրամի) կոնաձև հրաբխային զանգված է (բարձրությունը՝ 2 528 մ): Լեռը ծածկված է մարգագետնատափաստանային բուսականությամբ:

Արայի լեռը (բարձրությունը՝ 2 577 մ)՝ հանգած հրաբխային զանգված է, գտնվում է Արագած լեռից արևելք՝ Քասախ և Հրազդան գետերի միջև:

Մարզի հարթավայրերն են՝ Եղվարդի հարթավայրը (գտնվում է ծովի մակերևույթից 1 200 – 1 300 մ բարձրության վրա) և Հրազդանի սարահարթը (ծովի մակերևույթից՝ 1 700 – 1 800 մ բարձրության վրա):

Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում են երկրի համար առանցքային նշանակություն ունեցող Երևան–Հրազդան–Սևան ավտոմայրուղին և Երևան–Հրազդան–Իջևան երկաթգիծը:

2017թ.-ին մարզի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- ✓ արդյունաբերություն՝ 9.6%,
- ✓ գյուղատնտեսություն՝ 8.1%,
- ✓ շինարարություն՝ 5.0%,
- ✓ մանրածախ առևտուր՝ 4.6%,
- ✓ ծառայություններ՝ 7.2%:

ՀՀ Կոտայքի մարզը համեմատաբար զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողն արդյունաբերությունն է: Մարզը բացառիկ դեր ունի հատկապես էներգետիկայի բնագավառում: Այստեղ են գտնվում Էլեկտրաէներգիայի արտադրության 2 խոշոր կազմակերպություն:

Մարզի արդյունաբերության մյուս հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ ճյուղերը.

ա) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ալյուրի, ըմպելիքի արտադրություն),

բ) ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն (ապակու և դրանից պատրաստվող իրերի արտադրություն, ցեմենտի արտադրություն),

գ) մետաղագործական արդյունաբերություն և մետաղյա արտադրատեսակների արտադրություն (պողպատի և թուջի ձուլում),

դ) կահույքի արտադրություն, այլ կատեգորիաների մեջ չմտցված պատրաստի իրերի արտադրություն (ոսկերչական իրերի և կից ապրանքների (ադամանդի) արտադրություն):

Մարզի գյուղատնտեսությունը մասնագիտացած է թռչնաբուծության մեջ: Մարզի տարածքում են գործում հանրապետության 3 խոշոր թռչնաֆաբրիկաներ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

Արովյան քաղաքը (2018թ. տարեսկզբին՝ 44.6 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 18 կմ հեռավորության վրա: Հանրապետության ամենաարագ աճող քաղաքներից է, արդյունաբերական խոշոր կենտրոններից մեկը:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում գարեջրի արտադրությունը:

ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

	Քանակը				
	2013	2014	2015	2016	2017
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը <i>այդ թվում՝</i>	1 347	1 193	1 148	1 147	1 162
խանութներ	804	854	909	901	955
կրպակներ	484	280	153	163	128
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	2	2	2	2	2
սպառողական ապրանքների շուկաներ	5	4	5	3	3
առևտրի այլ օբյեկտներ	52	53	79	78	74

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Քանակը Number				
	2013	2014	2015	2016	2017
Պետական նախադպրոցական	54	54	53	52	53
Պետական հանրակրթական	104	104	104	104	103
Ոչ պետական հանրակրթական	1	1	1	1	1
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	24	25	24	23	23
Պետական նախնական մասնագիտակա- (արհեստագործական) ուսումնական ¹	6	8	8	8	7
Պետական միջին մասնագիտական ուսումնական	6	6	6	6	6
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	2	1	1	1	1

ՔԱՂԱՔՆԵՐ

Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ*
Հրազդան	40 465
Աբովյան	44 613
Չարենցավան	20 469
Եղվարդ	11 900
Բյուրեղավան	9 187
Նոր Հաճն	9 298
Ծաղկաձոր	1 185

¹ Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

ԳՅՈՒՂԵՐ

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ**
Հրագղանի տարածաշրջան		
1	Այափարս	2 055
2	Աղավնաձոր	1 269
3	Արզական	2 792
4	Արտավազ	523
5	Փյունիկ	331
6	Բջնի	2 782
7	Լեռնանիստ	2 877
8	Կարենիս	784
9	Հանքավան	69
10	Մարմարիկ	723
11	Մեղրաձոր	2 596
12	Գոռգոչ (Կորչյու)	17
13	Ջրառատ	557
14	Սոլակ	2 458
15	Քաղսի	2 454
16	Ֆանտան	892
Կոտայքի տարածաշրջան		
1	Ակունք	2 138
2	Առինջ	6 125
3	Արամուս	3 780
4	Արզնի	2 572
5	Բալահովիտ	3 567
6	Գառնի	7 750
7	Գեղաղիբ	681
8	Գեղաշեն	4 144
9	Գեղարդ	343
10	Գետարզել	804
11	Գողթ	2 010
12	Զառ	1 396
13	Զովաշեն	172
14	Զովք	818
15	Կաթնաղբյուր	641
16	Կամարիս	2 281
17	Կապուտան	1 331
18	Կոտայք	1 720
19	Հատիս	391
20	Հացավան	564
21	Զորաղբյուր	2 304
22	Մայակովսկի	2 174
23	Նոր գյուղ	1 593
24	Նուռնուս	635
25	Ողջաբերդ	959
26	Պտղնի	1 617
27	Ջրաբեր	421
28	Ջրվեժ	5 943
29	Սևաբերդ	259
30	Վերին Պտղնի	782
Նաիրիի տարածաշրջան		
1	Արագյուղ	1 158

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ**
2	Արգել	3 195
3	Բուժական	1 650
4	Գետամեջ	744
5	Զովունի	6 002
6	Զորական	1 562
7	Թեղենիք	522
8	Մրգաշեն	2 145
9	Նոր Արտամետ	1 100
10	Նոր Գեղի	6 323
11	Նոր Երզնկա	1 819
12	Պոռչյան	5 396
13	Սարայանջ	344
14	Քանաքեռական	3 759
15	Քասախ	5 659
16	Քարաշամբ	696

*ՀՀ Կոտայքի մարզի քաղաքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ:

** ՀՀ մարզերի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը՝ համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 955 գյուղական բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի, ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2018թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +12.2%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղերի միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2017թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղա- մարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10 000	5 204	4 796
Ծնվածներ, մարդ	128	62	66
Մահացածներ, մարդ	93	44	49
Ամուսնություններ	51	X	X
Ամուսնալուծություններ	12	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակավակերեսով, քառ.մ	39.1	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	252	119	133
հանրակրթական	1 403	675	728
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	181	114	67
նախնական մասնագիտական (արհեստագործական)	27	7	20
միջին մասնագիտական	52	24	28
բարձրագույն մասնագիտական	9	5	4
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	34 223
Մարզիկներ, մարդ	145	15	130
Զբաղվածներ, մարդ	3 266	1 332	1 934
նրանցից՝ գիտական հիմնարկներում	0.0	0.0	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	0.0	0.0	-
ուսուցիչներ	119	103	16
բժիշկներ	20
միջին բուժանձնակազմ	39
Գործազուրկներ, մարդ	941	419	522
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեկերթի դրությամբ, մարդ	1 421	836	585
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	359	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	18 068
թատրոն	42
համերգ	-	-	-
թանգարան	353
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	66	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	35	X	X
միջին ծանրության	22	X	X
ծանր	9	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X

¹ Ցուցանիշները հաշվարկային են: